ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ստեփանյան,

Ի պատասխան Ձեր 23.11.2023թ. հ.Ա-Հ/10 գրության՝ Շիրակի փողոցի կոյուղագծերի վերաբերյալ, տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Բարձրացված հարցի կարգավորումը գտնվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, Ջրային կոմիտեի և/կամ սեփականատերերի (շենքը սպասարկող լիազոր մարմնի) պատասխանատվության ներքո:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ միջնորդվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ և շենքը սպասարկող լիազոր մարմին՝ խնդիրն ուսումնասիրելու և կարգավորելու համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Շիրակի փողոց հ.66 շենքի ներսում գտնվող կոյուղագծերն այս պահին գտնվում են աշխատանքային վիճակում: Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը բազմիցս միջնորդությամբ դիմել է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը՝ շենքի հարակից տարածքի դիտահորերը և արտաքին ցանցի կոյուղագծերը բարձր ճնշման մեքենայով մաքրման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ